ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«24» 05 2018թ.
հեռ. (0255) 6– 18 - 97
mail: metsparni.lori@mta.gov. am
թիվ ՄՊ-119/18

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊՐ-Ն Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Կրկին Ձեզ եմ ներկայացնում Մեծ Պարնի համայնքի ավագանու 2018թ. թիվ 11-15 որոշումները :

Առդիր 6 թերթ

Համայնքի ղեկավար Գ. Պալյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«18» մայիսի 2018 թ. N 11-Ն

### ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27 -Ի << ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 40 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի՝

Մեծ Պարնի համայնքի ավագանին որոշում է.

1. Մեծ Պարնի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27 -ի << Մեծ Պարնի համայնքի 2018թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 40 -Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *Կողմ* | *Դեմ* | *Ձեռնպահ* |
|---|---|---|---|
| *Արզումանյան Արամայիս* | | | |
| *Գասոյան Կարեն* | | | |
| *Ղռչիկյան Լուսինե* | | | |
| *Նազարյան Արամ* | | | |
| *Ջոլյան Անդրանիկ* | | | |
| *Ջոլյան Բաբկեն* | | | |
| *Սանթրոսյան Գրետա* | | | |

*Համայնքի ղեկավար՝ ------------------------ Գ. Պալյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾ ՊԱՐՆԻ ՅԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Յայաստանի Յանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
Էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» մայիսի 2018 թ. N 12-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 10-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Մեծ Պարնի համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արզումանյան Արամայիս | | | |
| Գասոյան Կարեն | | | |
| Ղոչիկյան Լուսինե | | | |
| Նազարյան Արամ | | | |
| Զոյան Անդրանիկ | | | |
| Զոյան Բաբկեն | | | |
| Սանթրոսյան Գրետա | | | |

Յամայնքի ղեկավար՝ ------------------Գ. Պալյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ավագանու
2018 թվականի մայիսի 18-ի N 12-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ և ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Կարեն Գրիգորի Գաբրիելյանին74.000 /յոթանասուն չորս հազար/ դրամ ուսման վարձ
2. Ժենյա Ռոլանդի Բոյաջյանին 50.000 / հիսուն հազար / դրամ ուսման վարձ
3. Գրետա Կամսարի Թադևոսյանին 50.000 / հիսուն հազար / դրամ ուսման վարձ
4. Վարդուշ Գագիկի Գաբրիելյանին 50.000 / հիսուն հազար / դրամ ուսման վարձ
5. Միասնիկ Ֆրունզիկի Փիլոյանին 50.000 / հիսուն հազար / դրամ սոց. օգնություն
6. Մուշեղ Վազգենի Նազարյանին 30000 /եռեսուն հազար / դրամ սոց. օգնություն
7. Աշոտ Գևորգի Ղոչիկյանին 30000 /եռեսուն հազար / դրամ սոց. օգնություն
8. Անահիտ Համլետի Զոթյանին 30000 /եռեսուն հազար / դրամ սոց. օգնություն
9. Էդգար Սերժիկի Հալաջյանին 50.000 / հիսուն հազար / դրամ հուղարկավորման ծախս

Ընդամենը 414000 / չորս հարյուր տասնը չորս հազար/ դրամ

ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. ԳԱՄՈՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ * 06801098 *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«18» մայիսի 2018 թ. N 13-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱԿՏՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 10.05.2018 թվականի թիվ 101/113.3/2759-18 գրությունը համայնքի ավագանին

որոշում է.

1. ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2018 թվականի 2-րդ եռամսյակում Մեծ Պարնիի համայնքապետարանում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված ակտի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունել ի գիտություն:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ակտում արձանագրված թերությունների և բացթողումների ուղղման և կանխարգելման ուղղությամբ:
3. Ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արզումանյան Արամայիս | | | |
| Գասոյան Կարեն | | | |
| Ղռչիկյան Լուսինե | | | |
| Նազարյան Արամ | | | |
| Զոքյան Անդրանիկ | | | |
| Զոքյան Բաբկեն | | | |
| Սանթրոսյան Գրետա | | | |

Համայնքի ղեկավար՝ ---------------------------Գ. Պալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
Էլ. փոստ` metsparni.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«18» մայիսի 2018 թ. N 14-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ` Մեծ Պարնի համայնքի սեփականություն համարվող բնակավայրերի կատեգորիայի այլ հողերից 06-075-0125 -0007 ծածկագրի 0.1037 հա հողամասը աճուրդով օտարելու մասին և ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով Մեծ Պարնի համայնքի ավագանին

Որոշեց

Մեծ Պարնի համայքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի կատեգորիայի այլ հողերից 06-075-0125 -0007 ծածկագրի 0.1037 հա հողամասը օտարել աճուրդով` 230400 դրամ մեկնարկային արժեքով:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արզումանյան Արամայիս | | | |
| Գասոյան Կարեն | | | |
| Ղոչիկյան Լուսինե | | | |
| Նազարյան Արամ | | | |
| Զոբյան Անդրանիկ | | | |
| Զոբյան Բաբկեն | | | |
| Սանթրոսյան Գրետա | | | |

Համայնքի ղեկավար` ----------------Գ. Պալյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«18» մայիսի 2018 թ. N 15-Ա

## ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015թ.-ի հունիսի 4-ի «ՀՀ կառավարության 2001թվականի մայիսի 14-ի թիվ 408 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 608-Ն որոշումը Մեծ Պարնի համայնքի ավագանին

Որոշեց

Հաստատել Մեծ Պարնի համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը համաձայն հավելվածի:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արզումանյան Արամայիս | | | |
| Գասոյան Կարեն | | | |
| Ղոչիկյան Լուսինե | | | |
| Նազարյան Արամ | | | |
| Զոքյան Անդրանիկ | | | |
| Զոքյան Բաբկեն | | | |
| Սանթրոսյան Գրետա | | | |

Համայնքի ղեկավարի ---------------------Գ. Պալյան